

թէպէտա պատանեակի, բայց մօրուք ունի, ինչպէս և մեր պատանեակ Վահագնը. «ղեղջորուսը» ղեղջնահերը, երկաթեան, առմա խմողն արտգ խմելով աճեց զօրութեամբ, հիանալի զամբրիկների տերը պէտք է ամեն փորձանքից աղատէ իւր խարտեաշներին» (Տիերին) (Rigv. II. 645. 8):

Պատանեակ խարտեաց, հրեղէն, ոսկեհրեր,
թէ հուր հեր, գեղնամօրուս, բոց մօրուս
թէ կարմրամօրուս (ինչպիսին է թռռ), արե-
գակնաշեայ թէ հրաշեայ (թռռ) առնուած է,
հենց կոյծակի երեսոյթից, նորս այրող, հրեղէն
ու բոցեղէն, կամ բոցի ու հրոյ ոսկեգոյն, կար-
միք ու վայլուն յատկութիւններից:

Այսպէս տեսնում ենք, որ Վահագնի
երգի մէջ նորա ծննդեան և կերպարանքի
բալոր յատկութիւններն ամբողջապէս մի ամ-
պլոպային ասառն ծու՝ Խնդրայինն են: Բայց այդ
գեա ամենը չէ: Խնդրան ծնուելուն պէս բո-
ցերի միջից վազում է ամպոպի վիշապի՝ Ահիի
(օձի) կամ վրտրայի (ամպի, ամզի անձնա-
ւորումի, որ յաճախ ներկայանում է իրեւ
վիշապ) գէմ կռուելու. և կռուելով յաղ-
թում ու սպանում է նորան: Եւ միթէ նոյնը
չէ անում և մեր Վահագնի Դժբախտարար
Խորենացին երգի շարունակութեան միայն
համառօտ բովանդակութիւնն է մէջ բերել
ասելով. «Յես որոյ (ծննդեան նկարագիրն
անելուց յետոյ) և ընդ վիշապաց տաէին յեր-
զին կռուել նմա և յաղթելու: Երբ մի անդամ
իմանանք թէ ի՞նչ են վիշապները այն ժա-
մանակ կարող ենք հաւաստի ասել: որ մի
բնական երեսյթի անձնաւորում վահագնի
կռիւ ոչ թէ երկրի վրայ օձերի գէմ է եղել
այլ իրօք իրրե օգերեաւթիւ ամպրոպային
կռիւ (Gewitterkampf) է ըմբռնուել ինչ-
պէս Խնդրայի կռիւն է: Մի հայեացը ու հա-
ւատը, որ յայծմ կենդանի է մեր ժողովողի
մէջ:

U.S. USES OF KUWAIT

$$(\tilde{v}_1, \dots, \tilde{v}_{n+1}, \dots, \tilde{v}_k, \tilde{v}_k)$$



ԱՅԼ. ԵՒ ԱՅԼ.Ք

Սովորյան հիւանդութեան դեմ նոր միջոց.—Այժմ
Գերմանիայում ծովազ ճանապարհորդողներին, եթէ
ցանկանում են այդ սարսափելի ախտի ազդեցու-
թիւնից ազատ մնալ, իրքե մի նոր միջոց առաջար-
կում են կարմիր ակնոցը, որին օժանդակել կարող է
քաղցր մղեկը (каломель, protochlorure de mercure
կամ Sublimé doux). Վերջինս իրքե գեղ պէտք է
խմել: Կարմիր ակնոց գործ ածելու գաղտնիքը բա-
ցարւում է այն ազդեցութեամբ, որ ունենում է
Պ. Էպշտէնի գիւտով կարմիր գոյնը ուղեղի ա-
րեան անօթների վրայ, Ծովային հիւանդութիւնը,
ըստ երեւութիւն, ուղեղի արեան պակասութիւնիցն
է յառաջանում: Այսինքն այդ գործարանի սակա-
ւարիւն լինելուց. մինչգեռ կարմիր գոյնը, աչքի
վրայ ազգելով, ընդհակառակն արեան առատ հո-
սանք է մզում դէպի ուղեղը: Ասում են, որ երբ
մէկն արդէն ծովային հիւանդութեան է ենթար-
կուած և կարմիր ակնոցի վրայ է նայում: Չատ
շուտով և կատարեալ թժկութիւն է գտնում:

ձափոնական բուդր.—Այդ թուղթն, ինչպէս
արգէն յայտնի է, պատրաստում է Edgeworfia papyri-
fera, Broussonia papyrifera և Wickstroemia canecensis
ծառերի թնափայցից, որոնց վրայ աւելացնում են նաև
բամբուկ: Այս բոյսերի կեղեն այնքան են եփում
ջրի մէջ, մինչև նրա թելերը բոլորովին քրքրուում
են: Յետոյ պատրաստուած զանգուածը մազերի
մէջ են լցնում: որ ջուրը քամուի: իսկ վերջը չո-
րացնում են և ապա մամուլի տակ դնում: Հետե-
անքը շատ զարմանալի է, ստացնում է մի այնպիսի
թուղթ, ողն իր անսովոր դիմացկունութեամբն ու
պնդութեամբը ապշեցնում է օտարերկրացիներին
և միջոց է տալիս գործադրելու տնային զանազան
պէտքերի համար: Այսպէս այս թղթից շինում
են շարժական պատեր կամ միջնորմներ, գործ
են ածում լուսամուտների համար ապակու տեղ,
շինում են հովանոցներ, լապտերներ, թաշկի-
նակներ, զլիսարկներ և նրանց համար շապիկներ: Այդ թղթի աւելի հաստ տեսակն իրեւ կաշի հն
բանեցնում: Աերջապէս նորանից շինում են դրա-
մատների համար տոմսակներ, որոնք ոչ ժամանակի
ազդեցութիւննեց և ոչ իսկ ձեռքից ձեռք անցնե-
լուց ամենաին չեն վնասուում: Այս տեսակի
թուղթ պատրաստելն ձոփնիսայի նախնական արգիւ-
նարերութիւններից մէկն է, սակայն կարող է շու-
տով վերջ ունենալ ձափոնացիների անզուսպ օտա-
րամոլութեան պատճառով: որ ամեն բանով աշխա-
տում են նմանուել Եւրոպացիներին: 1892 թուին
ձափոնական թղթի արգիւնարերութիւնն իր ամե-
նաբարձր զագաթնակէտին էր հասել, այն է 25

միլին փրանկ արժողութեան։ Բայց այդ ժամանակուանից ի վեր կամաց կամաց նուազում է ու որովհետեւ եւրոպական եղանակով պատրաստուածը աւելի մատչելի լինելով՝ գործածութիւնից դուրս է հանել ճափոնական հին թուղթը։

* *

Բարելունի կախաղանաւոր պարտէզիւրը. — Մինչեւ օրս գտնուած ամենահին բեկուազիր արձանազրութիւններից և ոչ մէկի մէջ յլշատակութիւն չկար այդ առասպելական պարտէզների մասին։ Քրունո Մէյսէրը, որ Ասորեստանի յայտնի ուսումնասիրուներից մէկն է, վերջերքս գտել է Բարելունի Ասուր Բանիպալ թագաւորի պալատի բնեկորներից մնացած ալերաստրի մի մեծ կտորի վրայ, որը պահուում է Բրիտանական թանգարանի ստորին յարկի գեռ ևս շատ քիչ ուսումնասիրուած հնութիւնների մէջ, այդ հոչակաւոր պարտէզների անեղծ պատէրը, ուր նրանք այսպէս են ներկայացրած. ձափակողմում, րլրի վրայ, կառուցուած է մի տաճար, որը զարդարուած է բազմամիտ բարձր սիւներով։ Տաճարից ձախ, նոյն բլրի գագամին, ժայռի վրայ կանգնած է մի կուռք, որի ստորոտին է հասնում լյայն ուզին։ Ալերաստրի բնեկորի ամրող աջակողմեան մասը բռնում է նկարն այն պարտէզների, որոնք, ինչպէս յայտնի է, հին աշխարհի եօթն հրաշալիքներից մէկն էին համարւում։ Այդտեղ բուրգերի վրայ կամարներ են ձգուած, իսկ զրանց վրայ բարձրացիր այգիներ, որոնց մէջ մի քանի տեղերում սիւների շարքեր են անցնում իրենց վրայի գարատափերով։ Բլուրների լանջերից վերև են տանում ոլոր մոլոր շատիզներ, իսկ այս ու այն կողմերից առուակներ են հոսում ու ջուր մոտակարարում առանձին ջրաբաշխական մեքենաներից։ Մինչեւ այժմ այնպէս էին ընդունում, թէ Բարելոնի արուեստական պարտէզների միտք յլայցողը նարուգոյնոսոր ալքան է եղել, որը Մարաստանի արքայագստեր հետ ամուսնանալով և մտածելով, որ նա իր հայրենի երկրի սարերն ու ձորերը կյիշէ և նրանց կարօտը կքաշէ, վճռեց արուեստական լեռներ կանգնեցնել, որոնք իրենց ճախ բռւսականութեամբ պիտի փոխարինեն դժուոյի հայրենիքի բնական գեղեցկութիւններին։ Սակայն Մէյսէրն այն եղբակացութեան է եկել, որ նարուգոյնոսորը միայն նորոգել է տուել այդ պարտէզները, որոնք գոյութիւն ունեին Բարելոնում գեռ նորա թագաւորութիւնից շատ առաջ և աւերուել էին, ինչպէս քաղաքը։ Ք. Ծ. 648 տարի առաջ։

* *

Բնական ծաղկմերի արուեստական հոտը. — Դեռ ևս շատ միջոց չի անցել այն ժամանակուանից, ինչ մասնագէտ պարտիզանները պարծանքով յայ-

տարարեցին ամէն տեղ, թէ վերջապէս կարողացան կատարեալ յաջողութեամբ միջոց ձեռք բերել ծաղկենների բնական գոյնն իրենց ցանկութեամբ այս ու այն տեսակի փոփոխելու նրանք այլ ևս չեն գոհանում և աւելի ու աւելի առաջ են գնում, այսինքն քըն ուզում են արուեստական եղանակով անուշ բուրումն տալ բոլորովին անհօտ և կամ զարշահօտ ծաղկեններին, որոնք թեպէտ և իրենց փառաւոր տեսքովն ու պէս պէս գոյներով աչքի են ընկնում, բայց իրենց անդուրեկան հոտովը կիսով շափի կորցնում են իրենց արժեքը։

Այդ հնարագիտութեան սկզբան այսպէս տրուեցաւ. Մի քանի տարի սրանից առաջ մաք ամբով մի փորձ կատարեցին Ամիրիկայի մի բոլորովին անհօտ, բայց մինչոյն ժամանակ շատ գեղեցիկ ծաղկի վրայ, որի սերմերը նախ թրջեցին վարդաջրի ու մուշկի խառնուրդի մէջ, ապա չորացրին ու սովորական եղանակով վաղանցին։ Եւ երբ աճեց բոյսը, ստացան, թէ ոչ բոլորովին անուշաբոյր, ատկայն բաւականին հոտաւետ ծաղկի։ Այս յաջողութիւնը տեսնելով, փոփոխուած ու շատից քչէց աղնուացած ծաղկի սերմերը կրկին նոյնպիս փորձի ենթարկեցին։ Այս անգամ փորձն արդէն յաջողուած էր. փոփոխակի գարշելի անհօտ ծաղկի, ստացուեցաւ անուշաբոյր ծաղկի, որն իր բուրմունքով մանուշակ ու յասմիկ էր յլշեցնում։ Այդ ժամանակից ի վեր մի քանի ուրիշ փորձեր էլ կատարեցին զանազան ծաղկենների վրայ և յայտնուեցաւ, որ հետեւալ միջոցը ամենից աւելի բարեյածող հետեւանքներն է տալիս։

Ակրցնում են ոչխարի աղըն ու քացախի մէջ թրջոց գնում, որի հետ առաջուց խառնում են մուշկ ու յամպար՝ փոշի գարձրած։ Յետոյ այն բոյսերի սերմերն ու սոխերը, որոնց ծաղկենների հոտն ուզում են փոփոխել, գնում են այս խառնուրդի մէջ և թողնում են մի քանի օր մինչեւ ցանելը։ Ահա այս պարզ ու հեշտ միջոցով հասնում են նշանաւոր հետեւանքների։

* *

Հեկայ ծաղկի. — Բուսական թագաւորութեան դանազան ներկայացուցիչների մէջ իմիստ աչքի է ընկնում վիթիսարի Victoria regia-a-n., ըրի շուշանը։ Այդ ծաղկիկը, որի հայրենիքն արեագարձային և մերկայի գետերի խաղաղ ծովածոցերն են, ամենայն իրաւամբ ջրի շուշանների թագուհին է կոչւում։ Վիթիսարիան ահազին մեծութեան է հասնում. նրա կլոր տերևները, որոնց լայնքը մինչեւ մի ասմէն է լինում, եղերքների մօս 5—8 սանտիմետր վերև են թերւում։ Ստորին փշալից մակերեսովը ներկուած է ծիրանի գոյնով և ունի կարծր խիստ գուր ցցուած կողեր, որոնք օժտուած են լինում օդի խոռոչներով։ Տերևն, իր այդպիսի կաղմութեան շնորհիւ կարող է առանց ծալուելու մի երեխայի իր վրայ պահիլ։ Յաճախ

ջերմոցներում այս բոյսը միայն իր արտասովոր մեծութեան համար է մշակւում։ Պետերուրք զի բուսաբանական պարտէզը նշյալէս այս ծաղիկներից մի հատն ունի։ Ամէն ամսու պարտէզի վարչութիւնը յայտարարում է ջրի շուշանի ծաղկելու ժամանակը, և հասարակութիւնը խուռան բազմութեամբ պարտիզի կլոր ջերմոցն է գիմում, որտեղ լնդաբակ ջրամբարի տաք ջրի երեսն հըսկայ ծաղկին է վիթխարի տերենները սփառել, ջրի շուշանի վարդագոյն սպիտակ ծաղիկները լայնութեամբ 14 մատնաշափ են լինում։

* *

Թէյն ինչպէս պէտք է խմել։ — Մենք ամէնքս թէյ, ենք խմում, սակայն շատ քչերս գիտենք, թէ ի՞նչպէս պէտք է խմել։ Զինացիները, որոնք թէյի թժիքը մշակելու մէջ առանձին հմտութիւն ու ձարտարութիւն են ցոյց տալիս, պատրաստում են նաև թէյի յայտնի տեսակները, որ մենք ստանում ենք Զինաստանից՝ այնպէս, ինչպէս այնտեղ պատրաստուած են։ ուրեմն շատ հասկանալի պիտի լինի, որ նրանք թէյ խմելն էլ մեղնից աւելի լաւ պիտի իմանան։ Զինացին երբէք առանձին թէյամանում թէյ չի պատրաստում, ինչպէս ընդունուած է շատ երկներում, այլ մի պտղուց չոր թէյ է լինում։ Թէյի բաժակի մէջ, եռ եկած ջուր քաշում վրան ու ծածկում կափարչով, եւ երբ թէյի բոլոր թերթիկները նստում են բաժակի տակը, զոյն տալով միջի ջրին, Զինացին խմում է, որքան կարելի է տաք տաք, ամեններն շմողներով, որ հօվանայ։ Արևելքումն էլ թէյն առհասարակ այդպէս են խմում և համարում են այդ զովացնող միջոց։ Անըլին հանգամանքը շատ հասկանալի է, տաք թէյը, խիստ գործիքացում յառաջացնելով, ցածացնում է մեր մարմնի բարեխառնութեան աստիճանը, որով և հնարաւորութիւն է տալիս մեզ հեշտութեամբ տանելու տօմքը։ — Similia similibus curantur (ինչով տկարացար, նրանով և բժշկուիր)։ Բայց պէտք է ասել, որ Խուսաստանում թէյ պատրաստելու ձևն էլ բաւականին ուղիղ է, և արդիականութիւնը շատ համարական տաք ջրով թէյը լցնել հարկաւոր շափութէյ ու վրան ջուր քաշել և երբէք լնդաների վրայ շնչել։ այլապէս թէյը վատ համ կստանայ ու իր բուրմունքի մի մասը կկորցնէ,

* *

Մառանների եւ զետեափոր նկուղների խոնառութեան առաջն տուներու միջոց։ — Պէտք է մի զրուանքայ քլորային կիր վերցնել ու լցնել մի հին խեցանօթի, և կամ ցնցուղի մէջ և բաց բերանով գնել մառանում։ Քլորային կիրը օդի ջրային գուրշները իրեն կքաշի և նրա չորանալուն կնպաստէ։ Այդ աղը, որ իր մէջն է հաւաքելու օդի գոլոր-

շիացած ջուրը և կամ գուցէ լուծուելու է նրա մէջը, կարող է զարձեալ պէտք զալ։ Հարկաւոր է միայն զօրեղ կրակի ազդեցութեան ենթարկել ու իր բնական վիճակին վերածել, իրը կորցնելով իր միջի ջուրը, կրկին ընդունակ է զառնում օդի ջրային գուրշիները իրեն ձգելու։ Այս միջոցն յատկապէս ձեռնտու է գործազրել այն տեղիրում։ որտեղ կարտովիլ են պահում։ որտեղ կարտովիլ են պահում։ որովհետեւ այս ձեռով հնարաւորութիւնն են ունենում այզպիսի պաշարեղէնի ծլելու առաջն առնել։

* *

Մազերի բափուելու պատմաը։ — Պարիզի նշանաւոր բժիշկներից մէկը, Սարուրոն, որը յատկապէս մազերի հիւանդութեանց բժշկութեամբ է զբաղւում, գտել է հերաթափութեան բացիլը։ Նա ապացուցել է, որ ճաղատութիւնը յառաջ է գալիս սառնաձին միկրոբներից, որոնք իրենց արտաքին տեսքովը նման են լատիսական ծ տարին։ Մի քանի անյաջող փորձերից յետոյ, Սարուրոն կարողացաւ այս միկրոբներին բազմացնել, որոնցով և սկսեց մի կարգ հետաքրքիր փորձեր կատարել զանազան կենդանիների վրայ։ Այս ախտով ամենից աւելի հեշտութեամբ վարակւում են կատուներն ու ճագարները, որոնց կաշին աւելի զգայուն լինելով, շուտով զրկւում է մազերից, Միկրորի վնասակար ներգործութիւնը նրա մէջն է որ նա քայլքայում է այն զեղչերը, որոնք մազերի արմատներին անունդ են հասցնում։ Սարուրոն իր զեկուցման մէջ, որն այս օրերս կարդաց վկաչուի հիւանդութեանց մասնագէտների ժողովում։ յոյս է տածում, որ շուտով կարելի կլինի մազերի թափուելու առաջն առնել, նա հարեանցի կերպով յայտնեց, որ արդէն ձեռքի տակ այդ բացիկներին ոչնչացնելու միջոցն ունի և թէ կարելի է գործազրել այն, առանց որ և է վնաս պատճառելու մազերին։

ՄԱՍԻՆԱԽՈՍՈՍՈՒԹԻՒՆ.

↔ ↔ ↔ ↔ ↔

Սերենոսի պատմութիւնը և Մարքինացի, մատենադրական ուսումնասիրութիւն։ Ստ. Մալիսանեանց։ Թիֆլիս, 1899։ Հրատարակութիւն Թիֆլիսի հայոց Հրատարակչական ընկերութեան թ. 156։ Գիրքը կազմուած է է+118 էջից։

Գրքիս հեղինակը մեր զբականութեան մէջ յայտնի է զարձել իւր «Բռնի միութիւն և համարականի հայոց»։ և Ասողիկ պատմազրի ընտիր հրատարակութեանց վերայ կատարած աշխատութեամբ։